

Թե՛նէ նորա անհամեմատաբար ի վայր մնայ, եւ
 երբեմն, ասէ, դարձեալ աննման յայտնաբանու-
 թեամբք ի նոյն ասացելոցն գերազարգապէս
 օրհնաբանի. յորժամ աներեւոյթ զնա եւ ան-
 տեսանելի եւ անբովանդակելի անուանակոչեն
 եւ յորոց, ոչ որ ինչ են, այլ որ ինչ ոչն է՝
 նշանակի: Զի յաւէտ ընտանեգոյն է յայտնա-
 բանութիւն անտեսանելեացն ի ձեռն աննմանիցն
 վերաստեղծութեանց. վասնզի ոչ գարշութեամբ
 ընուն, այլ զարդարեն գերկնային զարդան այսպիսի
 ասացելոցն, սրբազնաբանութիւնք՝ աննմանիւք
 կերպաւորութեամբք երեւեցուցեալ զնոսա. քան-
 զի զմեր միտս յաւէտ համբառնան աննմանքն քան
 զնմանն: Այսու աղագաւ ուրեմն աստուածպե-
 տութիւն ոչ զամենայն ինչ յայտնել կամելով
 եւ ոչ զամենայն ինչ թաքուցանել. զի ամենեւին
 յայտնիքն անպատիւ լինէին եւ ամենեւին թա-
 քունքն՝ անխնդրելիք, արար ուրեմն ըստ օրինակի
 բնութեան, զոմանս յայտնիս՝ ըստ նկարագրա-
 կանի իմացման եւ զոմանս թաքուն՝ ըստ խորհրդա-
 կանի եւ հոգեւորի իմացման. զի թերեւս զթա-
 քունսն ի ձեռն յայտնագունից մեզ ի յայտ
 բերիցէր, իբր ըստ կերպի հաւաքաբանութեան.
 զոր եւ Գաւիթ փիլիսոփայն ի Գիրս Աերլու-
 ծականքն ասէր թէ Բնութիւն ոչ զամենայն ինչ
 արար յայտնի, եւ ոչ զամենայն ծածուկ. այլ
 զոմանս յայտնի եւ զոմանս ի ծածուկ. զի թէ
 ամենայն ինչ յայտնի լինէր՝ անպատիւ լինիւր,
 եւ թէ բոլորն ծածուկ՝ ապա ոչ ոք զկնի անկանէր.
 ուստի եկն, ասէ, ի մէջ հաւաքաբանութիւն, զի
 զանյայտն ի յայտ բերցէ միջնորդութեամբ յայտ-
 նագունից. այսպէս սրբազանն Պօղոս՝ զաներեւոյթն
 աստուծոյ երեւելի արարածովքս քարոզել եւ
 յայտնիլ ասէր, եւ զհաւատն՝ աներեւութից
 յայտնաբանիչ եւ դէմ՝ յանդիման կացուցիչ:
 Ուստի եւ զվերին անյայտն Երուսաղէմ ստորինս